ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

1139 Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք,
Երևանյան խճուղի 2-րդ փողոց թիվ 1 հեռ.(096)110044, merdzavan.armavir@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

23 ապրիլի 2021 թվականի N46-Ա

## *ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ և 24-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ավագանու 2012 թվականի հունիսի 6-ի N4 նիստի N02-Ն որոշումը և համաձայն 2021 թվականի ապրիլի 16-ին <<Մաչանյան Կարեն >> /որակավորման վկայական 0244, տրված 2012 թվականի հոկտեմբերի 29-ին/ ԱՁ-ի կողմից ստացված հողամասի, շինության հատակագծերի և շինության բնութագրի, **որոշում եմ.**

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության 0,005 հեկտար խառը կառուցապատման հողամասի վրա ինքնակամ կառուցված 9,6 քառակուսի մետր /արտաքին մակերեսով/ տնտեսական սենյակին տրամադրել հասցե՝ Հայաստանի Հանրապետություն մարզ Արմավիրի համայնք Մերձավան Երևանյան խճուղի N53/2 :

2. Սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման նպատակով որոշման մեկ օրինակը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2021 թվականի ապրիլի 23
համայնք Մերձավան